



## Ղևոնդ Ալիշան

### Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց

Ախտաբք կամ աղթաբք

#### Լուսատուների պաշտամունք

- Արեգակ
- Լուսին
- Աստղեր
- Եղանակ

Մարդու մտքի միջոցով Աստծու անհասանելի էության կամ բնության ամենաաստվածամուխ բացատրողը՝ Հովահննես ավետարանիչը, ասաց . «Աստուած լոյս է»։ Առաջին սրբագիր հեղինակը (Մովսեսը) Աստծու արարածներից անդրանիկ է համարում լույսը։ ՄԱրդու համար նրանից առաջ «խաւար էր ի վերայ անդրնդոց», և եթե այդ անչափորեն անձև, անձանոթ անդունդների մեջ կար նաև երկրիս սերմը, ապա այն ժամանակ հայտնվեց, երբ աստվածային կամքը հրամայեց . «Եղիցի Լոյս, և եղեւ Լոյս»։ Լուսի, բայց այսպիսի լուսի (ոչ թանձր նյութերի ու ճրագների) էությունը ինչ է՝ թողնում ենք իմաստասերներին։ Նայց մեզ բավական է մեր մտքի վկայությունը, թե լույսը արդարև գերազանց և ամենաազնիվ, ամենաապատվական, ամենապիտանի բանն է՝ կիսով չափ աննույթ, կիսով չափ նյութական գոյություն, որի ամենազգալի և ամենավայելուչ կերպավորումն ու բովանդակիչը, ըստ մեզ, երկնքի երեսին երևացողներն են։ Մենք դրանց ընդհանրորեն կոչում են լուսատուներ, իսկ առանձնակի՝ աստղեր, Արեգակ, Լուսին և այլն։ Սրանց տեսքը

հափշտակում է քիչ-շատ խոհուն միտքը, կամ նրանք իրենք են խոսում մտքի հետ և ավելի ազդու, քան այլ արարվածները . «Երկինք պատմեն զգործս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա պատմ՝ Հաստատութիւն», ինչը լուսաստուների բովանդակությունն է: Ասել է թե Աստծուն ամենագգալի կերպով կերպարանողը, ցուցադրողը և բացատրողը լուսաստուներն են, որոնք ասես անդիմադրելի գործությամբ իրենց և իրենց արարողին են ձգտում մարդկանց աչքը, միտքը, սիրտը:

Ընթերցողի համար առաջաբանիս միտքը պարզ է: Չմայլվող աչքերի հետ ուղիղ միտք ու սիրտ ունեցող մարդը տեսնում էր լուսաստուները, պաշտում էր իրեն և նրանց արարող արարիչին, ինչպես հետո և հիմա ենք պաշտում Նրան տաճարներում: Եվ ինչպես սրատես աստվածաբան ավետարանիչն է նկատել, «լոյսն ի խավարի անդ լուսավորէ»: Չենք կարող լույսի գերազանցությունն ընթռնել, եթե խավարի տխուր գաղափարն ու փորձն էլ չունենանք: Գրեթե ամեն օր գիշերի ու ցերեկի փոփոխությամբ տեսնում և իմանում ենք, որ խավարամուրթ լույսի ստվերն է, գրեթե անընդմեջ նրան մերձակա է և նրա հետևից է գնում-պտտվում: Սակայն «խաւարն ոչ եղևի նմա հասու»: Այսինքն՝ երբեմն չի դիպչում, կպչում, խառնվում ու միանում նրան: Լույսը միշտ լույս է, խավարը՝ միշտ խավար, ճշմարտությունը միշտ ճշմարիտ է, ստությունն ու մոլորությունը՝ միշտ սուտ և մոլար: Բայց ինչպես ստվերն է լույսի մոտ, այդպես էլ միշտ սուտն է գտնվում ճշմարտությանը մերձ ու մոտ: Իմաստունը միշտ տեսնում է դրանց գանազանությունը, ոչ իմաստունը խառնում է, շփոթում է ու շփոթվում է: Եվ այն, ինչը ուղղատես մտքի համար Աստծու պարզ հայելի էր ու հանդես, թյուրատես մտքի համար դառնում է սոսկ ցուցադրանք և փոխանակ պատկերի՝ դառնում է իսկություն ու գոյություն, միով բանիվ՝ աստվածային և միյնչև իսկ Աստված: Աստղերի տեսությունն ու քննությունը, ինչպես շատերի համար դարձել են Աստծուն ճանաչելու, աստվածապաշտ դառնալու պատճառ, այնպես էլ ոմանց համար (նաև շատ հին ժամանակներում) աստղերը դարձել են աստվածային կարծելու և լուսապաշտ կամ աստղապաշտ լինելու պատճառ: ԱՅդ է մեզ ցույց տալիս հնագույն ազգերի՝ քաղդեացիների, փյունիկեցիների, նաև եգիպտացիների և անգամ նորահայտ Ամերիկայի առավել կրթված ու ներկայումս գրեթե սպառված ազգի պատմությունը: Թվարկածներից ամենանշանավորը ու ամենահինը առաջին հիշտակավածներն են՝

քաղեացիները: Մինչև իսկ լուսատուների պաշտամունքն ու մուլար կրոնները, որ պարզապես կրում են աստղագիտություն կամ աղթարք անունը, նարնց անվամբ կոչվել են նաև քաղղեություն: Քաղղեացիների և հին հայերի երկրները գրեթե կիեց են: Կորդուքի լեռները հյուսիսային կողմից հայերինն էն, հարավից՝ քաղղեացիներինը: Եվ սրանց Ուր կամ Հուր քաղաքը, որտեղից Պաղեստին մեկնելու համար ելավ Աբրահամը, և որտեղ նրա նախնիները աստղերին պաշտամունք էին մատուցում, սահմանակից է Հայոց Ատրպատականին: Սրանց մերձավորությունը, հին ազգերի ընդհանուր ծանոթությունը և մեր ազգակիցների հետաքրքիր բարքերը մեզ համար չեն դժարացնում ընդունել, որ գուցե մեր նախնիներն էլ շատ կանուխ են խոտորվել աստղերի ուղիղ տեսությունից և հետևել են մուլար աստղագիտությանը և աստղաբաշխությանը լուսատուներին մատուցելով հավատք ու պաշտամունք: Այս երևույթը ճանաչելու պարզ եղանակը նշանավոր լուսատուները առանձին-առանձին քննելն է:

## Արեգակ

Թերևս միայն կույերը չգիտենան, որ ըստ մարդկանց բնական տեսողության՝ լուսատուների գլխավորը Արեգակն է և ոչվում է ակն (աչք) տիեզերաց, կամ գուցե ավելի լավ է ասել՝ տիեզերքի աչքը Արեգակի մեջ է: Ուստի բնական է նաև, որ գերբնականից մոլորված միտքը կամաց-կամաց, իր նախնիների զգացումներից խոտորվելով, Արեգակին համարել է աստված, մինչդեռ նախնիների համար այն աստվածության ամենազգալի հիշեցուցիչն էր, և նրան նայելով՝ Աստծուն էին պաշտում: Եվ ի սկզբնե, ինչպես մինչև հիմա էլ, աղոթելիս արևելք էին դառնում: Այս խոսքերիս հայնտի վկան մեր եկեղեցիների խորանի կամ ավագ խորանի դիրքն է: Հնագույնների համար Արեգակը կրոնի առիթ էր, հետո պատվելի եղավ, իսկ ավելի ուշ պաշտելի: Պաշտամունքը կամեցավ չտեսած ժամանակ էլ նրան տեսնել և հնարեց արեգակի պատկերները՝ նախ բնաձև, ապա անձնավորված և մարդաձև: Հետո արդեն նրան տվեցին առանձին անուն և պաշտեցին որպես առանձին աստծու: Եվ այսպես՝ այլևայլ ազգերը այլևայլ կերպ կոչեցին . քաղղեացիները՝ Բել կամ Բահաղ, ասորիները՝ Աթուր կամ Ասուր, Պաղեստինի գանազան ազգերը՝ Բելփեգովր, Մողոք, փյունիկեցիները՝ Ադոնիս, պարսիկները՝ Միիր, եգիպտացիները՝ Օսիրիս, հույները և հռոմեացիները՝ Փեբոս և այլն: Վերջինները,

մեկ արև աստվածը բավական չհամարելով, չորս-հինգ էլ ավելացրել են . մեկը՝ Արամազդի որդի, մյուսը՝ դարբին Հեփեստոսի, և այլն:

Գալով մեր հայկազուններին և թողնելով օտար լեզուներից առնված արեգակի անունները (ինչպես հերական Բեզեկ-ը) տվնջյալ լուսատուի համար ունենք երկու սովորական բառ (թեև երկուսն էլ ցույց են տալիս մի սկիզբ) արև (սանսկրիտում՝ Բավի) և արեգ-ակն, որից՝ ավելի սովորականը՝ արեգակ: Ինչպես աղբյուր-ակն-ը «ջրի բխում է» նշանակում, այնպես էլ արեգակ-ը տաքության ու լույսի նշանակ է: Նույն ար արմատը հնչմամբ լծորդ է ար (օր) և հուր բառերին: Կարող ենք գրել երրորդ, գոնե մերձավոր մի անուն ևս՝ արփի:

Բառերի ծագումը ինչպես էլ լինի, հավանորեն հին հայերը այլ ազգերի նման պետք է նախ արեգակը պաշտած ու պատվի արժանացրած լինեին երկնքում իր առերևույթ շրջանի մեջ, մանավանդ հորիզոնում ծագել-ծածկելու ժամանակ և հետո ներկայացնեին բոլորակի ձևով, ապա և՛ մարդակերպ: Հուսկ հետագայում, թվում է, օտարների նման կամ նրանց հետևելով անձնավոր էլ են համարել և իրենց պաշտած տեղերում այդպիսի ձև են տվել:

Ի՞նչ կերպարանք էին ընծայել: Եթե չեն սխալվում, մեր հին վիպասանները դա ներկայացնում են «Երկնէր Երկին, երկնէր Երկիր» երգով, որոնց գործակից է դառնում նաև ծովը, որ երկնում է մի կարմիր եղեգնիկ, որից բոց ու կրակ է ելնում, և դրանց միջից դուրս է վազում բոցեղեն, մանրիկ աչքերով, կարմրիկ ու խարտյաշ, արևակերպ մի պատանեկիկ: Կարծում են այսպես էին հավատում ու կերպարավորում կամ գոնե այսպես էին հնարում հայոց պաշտամունքավարներն ու բանաստեղծները: Վերջիններից ավելի նորագույնները այն խարտյաշ պատանեկիկին անձնավորեցին կամ ուզեցին ճանաչել որպես Վահագն, որ Կյուրոսի ժամանակակից՝ Տիգրանի՝ իրենց ամենասիրելի թագավորի և դյուցազնի թոռն էր կամ թոռնորդին: Գուցե իրենց և հայոց հավատքները այսպես հարմարեցրին Հնդկաստանից Տարոն եկած քուրմերը, որոնք ոպես աստծու էին պատիվ մատուցում Ազնիին՝ գերագույն կրակին՝ որպես տարրերի և եղանակների կենսատուի, ինչով և նույնացնում էին արևի հետ: Դյուրին էր նաև Ազնիին Վահագնի հետ նույնացնելը, որի անունը գրվում է նաև Վահակն: Եվ շատ որոշակի է ասում մեր հին վարդապետներից մեկը արարչության

բացատրության մեջ . «Ոմանք գԱրեգակն պաշտեցին և Վահակն կոչեցին» : Մի՞թե հնդկական Ագնի անվանումը համանիշ էչն լատիներեն Ignis («հուր») և հունական 'γῆρας անունները : Մեզ մերձավոր վրացիների պատմիչները ավանդում են, թե իրենց մեջ արեգակի և ընդհանրապես լուսատուների պաշտամունքը շատ կանուխ է մտեծ Մծխիթոսի մահվանից քիչ անց, որը, նորից ըստ ավանդույթի Հայկի եղբորորդին է :

Հայաստանում արևապատության երկորդ կամ ավելի ստույգ տեսակին ենք հանդիպում Արշակունիների տերության սկզբնավորումնով, որոնց նահապետ Վաղարշակը Փրկչի թվականից մեկ և կես դար առաջ կրոնական պաշտամունքների յայլայլ կարգադրությունների հետ «մեհեանս շինեալ յԱրմաիր՝ անդիրս հաստատէ Արեգական և Լուսնի» (Խորենացի, Բ . Ը) : Պարզ է, ուրեմն, որ այս արձանները դիցական էին կամ մարդակերպ, բայցինչպես թվում է, կիսով չափ, այսինքն՝ մարդակերպ էին մինչև կեսը կամ մեջքը : Թե ուրիշ ինչ ձև կամ կերպարանք ունեին, հայտնի չէ : Հավանորեն Միհրի դեմք ունեին, որի մասին դեռ խոսելու ենք : Թեև ենթադրում ենք, որ վերջինիս պաշտամունքը պարթևներից է եկել, բայց հավատքը հայերի մեջ արդեն կար : կային նաև արեգակնապաշտ կամ արեգապաշտ հայեր, ինչպես ասվում է մեր գրաբար լեզվով : Վաղարշակի թոռնորդու ժամանակ Բարգափրան գորապետը դաշինքի հաստատության համար նախ երդվում է արեգակով, հտո՛ երկնավոր ու երկրավոր ամենայն պաշտելիներով :

Արշամ թագավորը ևս հերա Ենանոսին ստիպում է նախ «երկիր պագանել Արեգական, և պաշտել գկուոս արքայի» (Խորենացի Բ . ԻԴ) : Թողնում եքն նաև եդեսացիների կողմից ասորական շաստվածների հետ արև և լուսին պաշտելու մասին Լաբուբնայի ասածը : Ինչպես հիշում են Ագաթանգեղոսն ու Խորենացին, վերոհիշյալ թագավորը (Տիգրան) և նրա հայրը՝ Արտաշեսը, որոնց արևներով էլ էր երդվում Բարգափրանը, յալ ավարի հետ հունական կուռքեր էլ բերեցին ու հաստատեցին իրենց աշխարհի այլևալ կողմերում : անհավանական չէ, որ դրանց մեջ կային նաև հունական արեգակներ՝ Ապոլոնի և Ձեբոստի կերպարանքներով, կառքերով ու երիվարներով : Գուցե մի հին ավանդությամբ, բայց ոչ հին «Ոսկեփորիկ»-ի մի գրիչ վերջիններիս (ձիերին) տալիս է անուններ՝ գրելով . Մանուանք վարչաց Արեգական, Էնիկ, ՄԷնիկ, ԲԷնիկ և ՍԷնիկ» :

Չգիտեն՝ Փերոսի կառքի ձիերն էլ հունական անուններ ունեին արդյոք, թե սրանք լոկ հայ խելքի ծնունդ են:

Վերոհիշյալ երդման ձևը հայտնի է դարձնում նաև արեգակի՝ կյանք նշանակելը, որ մնացել է քրիստոնեության մեջ ևս: Եկեղեցիկներում Բագրատունիների թողած արձանագրություններում շատ անգամ է գրվել . «Ի հիշատակ բարերարների արևշատության», այսինքն՝ արվում է երկար ապրելու մաղթանք: Այսօր իսկ լսում ենք արևդ սիրեն, եթե արևդ սիրես, արևիդ մեռնես երդմնաձև կամ փաղաքշական արտահայտությունները և այլն, ինչպես և հները մեռնելու կամ մեռցնելու համար ասում էին արևը հատնել, արևից զցել, ընկնել և սրանց նման բացատրություններ: Անշափահաս կամ երիտասարդ մեռնողն էլ կոչված է արեուպետ վախճանեալ:

Քննաբաններին անցողաբար հիշեցնեն, որ աստղապաշտ սաբեացիները մերոնց պես արեգակը կոչել են արև կամ ուրու: Գուցե պատահաբար, բայց Օվկիանիայում արեգակի պաշտամունքավարների ընկերությունը կոչվում է արեգի անվամբ (Arekois կամ Areois): Բայց մեզ համար ավելի դիտելի են մե՛ր երկրում այս լուսատուների անունով կոչված այլևայլ վայրերը, մանավանդ Տարոնում, որտեղ կա Արեգակնաձագ բլուրը, և Սյունիքում, որտեղ մի ամբողջ գավառ կոչվում է Արևիք, և պաշտամունքը հայտնի դարձավ ս . Բարդուղիմեոսի առաքելության ժամանակ:

Ավելի դյուրին և զարմանալին այն է, որ արևապաշտությունը առավել, քան այլ հավատքներ, ինչ-որ ձևով տևական ու խորն է արմատավորվել մեզ ազգակիցների մեջ: Եվ այլևայլ ժամանակներում երևացել են արևորդիներ, որ գուցե մինչև հիմա էլ կան, թեկուզև չորոշվի, թե որ ազգի մնացորդն են: 11-րդ դարի կեսին Գրիգոր Մագիստրոսը այս անունով է հիշում նրանց և համարում է զանդիկ մոզերից առաջացած «Ունքն ի նոցանէ դեղեալք՝ Արեգակնապաշտք, զոր Արեւորդիսն անուանեն . և ահա են յայդն գաւառի (Միջագետաց) բագունք, և քրիստոնեայս զինքեանս յայտնապէս կոչեն . բայց եթէ որպիսի՞ մոլորութեամբ և անատակութեամբ վարին, զիտենք զի ոչ են անտեղեակ»:

Մեծոփեցուն գրեթե ժամանակակից Հովհաննես Թլկուրանցի բանաստեղծն ու հայրապետը երգում էր .

«Կինն ոչ պրծգայ յԱրեւորդոյ,  
Ոչ ի Թուրքէ ոչ ի Հայէ .  
Չով որ սիրէ հաւատն այն է»:

Իսկ արև սիրող բույսերի մեջ մեկ էլ ծաղկաբան երգիչ (Դավիթ Սալաճորցին) հիշում է .

«Մինձն, Իրիցուկն ու Եղբրդակն, կու ըսպասեն Արեւորդուն .  
Նոցա երամն ուրիշ է, կու շրջին գօրն հետ արեւուն»:

Մեզ ավելի մոտ դարերի գրողների գրվածքներում էլ կան արևորդիներին վերաբերող հիշատակումներ: Մինչև հիմա Միջագետքի կողմերում շենսի (ասել է թե «արևային») կոչված աղանդավորները ունեն հեթանոսության, քրիստոնեության և իսլամի խառնուրդով մի կրոն: Նրանց ազգի ծագումը հայտնի չէ, և խոսում են տեղացիների լեզվով: Իսկ բուն Հայոց երկրում՝ Կաղզվանի կողմերում, դեռ լսվում են Երասխի և Արածանիի անջրպետ Արևորդի կամ Արծվորդի կոչված լեռների անուններ, որտեղ մեր օրերում իսկ հայտնվել են եզիդիներ ու արևապաշտներ, գոնե արևորդիներ, որ հիշատակված են տեղագիրների կողմից, որոնցից է Տեսիեն (Texier, Asie Mineure, I, 105, 123):

Մարդկանց համար արեգակի ներգործությունը ամենից ավելի նկատելի է երկրագործության կամ բույսերի աճի հարակավորության առումով, և դրանով է դրդված նրան պատիվ մատուցելը: Եվ որքան էլ զանազան բույսերը բնական պատճառով են կոչվել նրա անունով, դրանց մի մասի մեջ դեռ կարելի է նշմարել կրոնական ինչ-որ մտածողություն, ինչպես՝ արեգական մայր, արեգական ծաղիկ, արևքուրիկ, արևածագ, արևածաղիկ, արևպաշ և այլն: Արդյոք այսպիսի՞ ազդեցության համար էին նախնիները կարծում, թե արեգակը իրոք կենդանի էակ է, կամ թե նրա մեջ կան կենդանի էակներ, ինչպես վերոգրյալ ծանոթության մեջ է գուշակվում, և ինչպես մի աղթարաբան երդմնեցուցիչ էլ հավատալով կամ չհավատալով կամենում էր հիվանդությունները կապել նաև «365 Սրբովքն՝ որ կան ի սիրտ Արեգականն, որ ոչ հրեշտակք գիտեն և ոչ հրեշտակապետք, բայց միայն Հայր»:

Իսկ դու որտե՞ղ՞ց իմացար, ո՞վ խելացնոր, որ նրանց չտեսնելով ասում ես . «365 Սուրբք՝ որք կան ի մէջ ծովուն»:

## Լուսին

Ինչ որ ի սկզբանե ասացինք Արեգակի մասին, ըստ Ս . գրքի և մարդկանց բական տեսողության՝ անմիջականորեն վերաբերում է նաև Լուսնին, որովհետև ինչպես Աստված Արեգակը կարգեց տվեցյան լուսատու, այնպես և սա կոչվում է գիշերվա լուսատու (Ծննդոց, Ա, 16): Սրանց անունները և հիշատակումները սովորական մարդկանց մտքի համար խեղեփ (երկվորյակ) են, իսկ որոշ թերամիտների համար ոչ շատ օտար էր լուսնին արևի քույր անվանելը և նրա պես պաշտամունքի արժանացնելը: Լուսինը, թեև արեգակի չափ մեծ ու հզոր օգուտ չի տալիս մարդկանց, սակայն շատ առավելություններ էլ ունի անմխիթար մթության մեջ ծովում և ցամաքում մոլորվածներին ճանապարհ ցույց տալով, իր արծաթափայլ դեմքով և շողերով վարճացնելով աչքը ու ավելի շատ գրավելով սիրտը, քան արեգակը, որը գրավում է միտքը: Դարձյալ ավելին է, քան արեգակը, օրերի և ամիսների մանր չափերով, քառամաս աճումով ու նվազումով, ծնունդով և լրումով, նաև ազդելով կյանքի ներքին տնտեսության (առողջության), մանավանդ կանանց առողջության փոփոխության վրա: Եվ ծանոթ ախտի սովորական անունը, թեև ոչ նույնքան ստույգ, եղել է լուսնոտություն, որով բռնվողը կոչվում է լուսնահար, լուսանժեռ, որպիսիներին ոչ դեղով, այլ խոսքով և հրամանով բժշկեց մեր ամենաբույժ և ամենաողորմած Տեր Հիսուսը: Այդ հիվանդությունը օտար լեզուներով ևս սովորաբար այդպես է կոչվում (Lunatique): Իբր լուսնի պատճառած ուղեղի նվազության մեկ այլ ախտակիր է թվում լուսնագանչը: Լուսինը իր հանդարտ ազդեցությունն է թողնում նաև բույսերի վրա, ինչը առիթ է դարձել վերջիններիս մի մասը նրան ընծայելու կամ նրա անունով կոչելու, ինչպես մեր լուսնի թուփը (դուլփի դամար կամ դուլ բաղամբար՝ ըստ արաբների, իսկ արևմտյանների մոտ սովորաբար Zedoire), որի «տերեւն՝ զհետ Լուսնին ընթանայ տերեւ ստանայ, և ոստն կերպի հնգետասանօրեայ Լուսնին», ինչպես գրում են մեր աղթարքները և բժշկարանները: Լուսնի թուփը լուսնին ընծայելու կամ նրա հետ որևէ կերպ կապելու պատճառը, թվում է, լուսնի չորս կերպարանքների համեմատ թփի չորս գույն ունենալը կամ գույնը փոխելն է: Նույնը չէ, բայց սրան նման է լուսնի ծաղիկը, որ արաբները պարզապես կոչել են լուսին (դամեր): Այս ծաղիկի մասին բժշկարանները ասում են . «Տերեւն կարմիր յորդան գունով , և ի վերայ գլխուն՝ դեղնագոյն ծաղիկ, և տերեւք նորա զհետ լուսնի ընթանան . զի առաջին



օրն լուսնի՝ մէկ տերեւ ստանայ, և երբ լուսինն փլէ (վերջին քառորդ — Ղ . Ա . ) նորա տերեւքն թափին, և գիր ծաղիկն ի վրայ գլխուն պահէ . և հանապազ այդ է իւր բնութիւնն . ի նոր սկսանելն տերեւն արձակէ, և ի բուսանելն՝ մին մին թափի»:

Հիշված է նաև լուսնոտ ծաղիկը, բայց դրա ինչիպիսին լինելը անհայտ է: Գուցե նույն լուսնաստակի ծառն է, որ կոչվում է լվացտակ (ըստ ֆարնսիացիների՝ Romarin):

Վերոհիշյալը, լուսնի թուփ-ից գատ, ըստ արաբների, կոչվել է նաև լուսնի քար (հաճար ըլ դամեր) և, թվում է, տարբեր է լուսքարից, որովհետև սա ոչ թե լուսնի, այլ լույսի անուոնվ է, և ըստ այսմ՝ արաբներն անվանում են հաճար էն-նուր:

Կանխավ հիշեցրինք այս մանր, երկրորդական կամ հետևորդ բաները, որ դյուրին հասկացվեն լուսնի հավատքն ու պաշտամունքը կամ լուսնապաշտության միջնորդն ու ճամփան: Մինչև լուսնապաշտության անձնավորված պաշտամունքն ունենալը լուսնագիտությունը այսպիսի դիտողություններով կամ զգացումներով է մուտք գործել և հաստատվել, որովհետև նաև լուսնախտիրքը կամ լուսանհմայքը: Սովորաբար բոլոր լուսատուների քննությունն ու նշանակությունը ի սկզբանե ավելի կամ պակաս չափով եղել է բուն գիտություն և հետագայում տգիտությանը դարձել է մոլորություն: Ի տարբերություն այլ լուսատուների՝ լուսնի՝ դյուրությանը ճանաչվող փոփոխությունները եղել են ստույգ ու հարկավոր գիտություն, իսկ երբ սուտը խառնվել է ճշմարիտին, լուսնագիտությունն էլ, աստղագիտությունն էլ ընթացել են այլ կերպ . անվամբ ուղիղ են, բաց բացատրությանը դարձել են մոլար ու աղանդ: Լուսնահմայությունը ոչ միան հմայության ու կախարհության բազում տեսակներից մեկն է եղել, այլև գրեթե ընդհանուր է բոլոր ազգերի մեջ: Եվ որ ավելի էական է, լուսինը միշտ և առ այսօր էլ ունի իրեն հավատացողներ ու իրենով խաբեբայություն անողներ: Թուրիայի տարածքներում խաժամուժ ժողովրդի մեջ այդպիսի հմայողները հայտնի են և իրենց բառով կոչվում են այպագար («լուսնադետ»): Նրանց հիշելն անգամ թերևս ավելորդ էր, եթե դժվախտաբար մերագնյա քրիստոնյաների մեջ էլ չգտնվեին այնպիսիները, ովքեր գրված կամ անգիր աղթարքներով, պես-պես գրապանակներով, թվաբանական լուսացույցով և «էփիմերտես» գրվածքներով շհետևեին իրենց

մոլար նախնիներին, որ կոչվում են լուսնահնա, «որ գօրն՝ չար և բարի ասէ՝  
Լուսնովն»՝ ըստ 12-րդ դարի մի վարդապետի բացատրության, որը, ինչպես և  
իրենից առաջ և հետո եղածները, եղել է դրանց հանդիմանողն ու խրատողը:

Մրանցից առավել հետաքննելին մեզ հայտնի լուսնապաշտն է, ինչը տեսանք  
արևապաշտների մոտ՝ հայկագունների ու արշակունիների ժամանակների  
պատկերներով ու արձաններով հանդերձ: Թե ինչ տեսք ուներ հայերի պատած  
լուսինը, մեզ անհայտ է: Ընդ որում լուսինը նվագ է, քան արևը, բայց նրա  
պաշտամունքը գուցե ավելի հին է ու քաղղեությանը ժամանակակից: Կա Ս .  
գրքի մեկնիչների կարծիքը, որ մեր ազգի կամ երկրի անունը ըստ օտարների՝  
Ար-մենի կամ Ար-միննի, երբայերեն նշանակում է «լուսնի լեռ», կարծես լեռան  
վրա՝ հիշատակված դրացի քաղղեացիների նման լուսնի դիտորդներ են եղել: Եվ  
ինչպես ուրիշ ազգերի, այնպես էլ նրանց մեջ լուսինը կոչվում է Մեն, որպես և  
անվանվում է անձնավորյալը կամ շաստվածը . ըստ հույների ΜΙΟΗ, Men, Mena,  
Mene, որ նշանակում է նաև «ամիս», ինչպես այս մերձավոր հնչմամբ լավում է  
հունալատին ազգերի լեզուներում՝ ΜΙΟΗ3 կամ Μ3`Η6: Անգլիացիները լուսինը  
մուն (Moon) են կոչում նաև այժմ:

Հույները այս Մեն անվամբ ունեին լուսնային մի քանի շաստվածներ, որոնց մի  
մասը արական է, մյուս մասը՝ իգական, ինչպես գերմանացիների մոտ, որոնց  
լեզվում «լուսին» նշանակող անունը արական է (der Mond), իսկ «արև»  
նշանակողը (die Sonne)՝ իգական: Հավանորեն հայերինը արական էր և նման  
հռոմեացիների Lunus շաստվածին, որը, փոյուզագրակ կերպարանվելով, ավելի  
հավականա է դարձնում հայերից և փոյուզիացիներից առնված լինելը, որոնց  
ցեղակցությունը կամ իրարից ծագած լինելը վկայել են հին պատմիչները: Եվ  
շատ հավանական էր, որ հայերը իրենց Լուսին շաստվածին կոչում էին  
Փառնակ, ինչպես և կոչվում էր նրանց հարևան երկրներում՝ Վրաստանում ու  
Պոնտոսում: Բայց այդ անունը մեր լեզվի սեփականն է, և այդպես ենք համարում,  
մինչև փոյուզիացիների լեզվի հետ նույնությունն ու տարբերությունը ստուգիվ:  
Դարձյալ հավանական ենք համարում նրան հայերի մեջ Լուսնյակ կոչելը՝  
նյութականը աստվածներից զանազանելու համար: Եվ մի նշանավոր  
գուգակցություն է, որ Էտրուսկները (ներկայումս գիտնականներից ոմանք ջանում  
են Էտրուսկներին ներկայացնել որպես հայերին ազգակից կամ նրանցից սերած)՝

Իտալիայի մի մասի հին բնակիչները, որ եկել են արևմտյան Ասիայից, լուսինը կոչել են լուսնա: Ըստ մեր ռամկորների՝ լուսնկա անվանումը նշանակում է «լուսնի պայծառ ծագումը»:

Եղջերածն, մանեկածն, կամարածն կամ նավակածն լուսինը (ինչպես լուսնի պատկերների մեջ կերպարավորում էին նրա գլուխը) մեզանում կոչվում է մահիկ՝ ըստ պարսկերենի ծանոթ մահ կամ մահի բառի, որ նշանակում է «լուսին» և «ամիս», որի ձևից է հավանաբար մեհեանդ գարդը:

Բայց մեզ համար առավել քննելին մեր մեհեկի կեմ մեհեկան մասի անունն է, որը անմիջապես հաջորդում է արևանիշ արգե ամսին: Երբ, ըստ ուղղագույն տոմարի կամ օրացույցի, բնական տարին այս ամսով է սկսվում, մեհեկանը դառնում է վերջինը և նոր տարվան մերձավոր: Ամսանունների հիշատակման մեջ սա դարձյալ պետք է հիշենք, ինչպես հետո՝ պաշտամունքի տեղերի մեհյան անունը, որ հնչակից է մահիկ-ին և մեհեկ-ին:

Աչք ու միտք հրապուրող այս երկու մեծ լուսատուները թողնելու պահին հաճությամբ հիշենք, որ մեր նոր և սուրբ կրոնը դրանցից մեկը (արեգակը) նվիրաբերել կամ նմանեցրել է Քրիստոսին, մյուսը (լուսնինը)՝ նրա աննման Մորը և մեր Տիրամորը, որին այս երկուսը միաժամանակ սեփականում է մեր շարական երգողը . «Սըրբուհի, ի Լիբանանէ դիմեալ հարսն գգեցեալ զԱրեգակն արկեալ գքեւ, և ընդ ոտիւք զԼուսինն ստուերատեսակ»:

## Աստղեր

Եթե աստղերի մասին ասելիքը հետևեցնենք արեգակի և լուսնի՝ մեր կրոնի այլաբանական նմանությունից, ապա աստղերը պետք է նմանեցնել հրեշտակների: Եվ արդեն Մ . գիրքը թե՛ հրեշտակներին և թե՛ աստղերը կոչում է երկնքի գորություն (կամ գորք): Մարդկանց ամենաշատ և ամենախիտ մեկտեղած ամբողջությունը գորաբանակն է: յսպես է ըմբռնվում նաև հոգեղենների բազմությունը, մանավանդ նրանց գերագույն գորությունը և հողեղենների հետ առնչությունը ճանաչելիս: Բնության տեսարանների մեջ չկա առավել պայծառագույնն ու վսեմագույնը, քան այս լուսատուների բանակը: Գիշերային պարզ և հստակ երկնքին մի քանի վայրկյան նայող զգայուն մարդը

չի կարող դրանցով չզմայլել: Չկա նաև մարդկային հետաքրքրության առավել մեծ առակրա, որ տանջի ու խոնարհեցնի ավելի շուտ գիտունների գլուխը, քան անգետների: Մարդը ամբողջապես չի ճանաչում նաև երկրի վրայինը, մինչդեռ 6000-7000 տարիների քննությունից ու գյուտերից հետո իսկ աստղերին, մանավանդ նրանց ներքին էությանը ծանոթությունը դեռ այք ու բենի գիտություն է: Եվ շատ էլ հուսադիր չենք, որ համարձակ կկարդանք այդ աստվածագիծ երկնքի մագաղաթը, որը Նա պարզել է մեր դիմաց՝ որպես միջնորդ ներկա և հանդերձյալ կյանքի ու աշխարհների միջև, և որը մի տեսակ արգելված երկրի պես է: Տեսնում ես, բայց չես մտնում, այսինքն՝ չգիտես՝ իսկապես ինչ են և ինչի համար են: Սակայն քանի դեռ աստղերը երկնքի բարձրից ցուցում են մթամած երկրի վրա, պիտի չդադարեցն մարդկանց աչքն ու միտքը իրենց քաշել, ինչպես նրանցից մեկը (Հյուսիսային բևեռը) իրեն է քաշում մագնիսը: Եվ ինչպես հիմա է, հին դարերի ու ազգերի համար էլ պիտի նույնը լիներ, գուցե է՛լ ավելի էր հին ժողովուրդների համար, որոնք ի սկզբանե ապրում էին ոչ ծածկված տների մեջ, այլ բացօթյա կամ թեթև ծածկի ներքո: Եվ շատերը, հոիվ կամ երկրագործ լինելով, շատ ժամեր, երբեմն էլ ամբողջ գիշեր մնում էին բաց երկնքի տակ ու աստղերի առջև: Եվ քանզի դեռ շատ քիչ պատմական դիպվածներ էին եղել, մարդկանց միտքը առավել անգբաղ ու անարգել էր դիտում բնությունը երկրի երեսին և երկնքում: Գուցե այն ժամանակների ռամիկը սովորաբար ավելին էր կարդում աստղագնդի վրա, քան մեր ժամանակակիցը: Գոնե ստույգ է, որ իր հիշյալ պարզ տնտեսության ուարվեստի համար օգուտ էր քաղում նրանց դիրքից ու շարքից, երկնագմբեթի մեջ վեր կամ վար տեղափոխված երևալուց, որով կարողանում էր քիչ-շատ որոշել գիշերվա պահերն ու ժամերը:

Սակայն ինչպիսի՞ն էր տարածված հին կարծիքը աստղերի էության մասին: Հավանական է, որ ի սկզբանե ճանաչում էին արևի ու լուսնի նման: Եվ ինչպես ասում է Մ . գիրքը, աստղերը ևս Աստծու գործ են և համատարած խավարում Լուսնի օգնական ճրագներն են, որ չեն թափանցում, սակայն, ծածկված գաղտնիքների մեջ: իսկ երբ ճշմարիտ աստվածածանոթությունը աղոտացավ, աստղերը սկսեցին աստվածանալ, խմբովին կամ առանձնակի պատիվ արժանանալ, գոյացան պես-պես կարծիքներ ու առասպելներ, մանավանդ ավելի պայծառորեն աչքի ընկնողների մասին: Եվ ձևավորվեց աստղագիտությունը, որը տարբեր է յալկայլ ազգերի մոտ, որոնցից առաջինը


համարվում են քաղղեացիները: Եվ եթե ստույգ է վերոհիշյալ մեկնիչներից ու գիտուններից ոմանց կարծիքը, առջիններից են նաև հայերը: Իսկ հույները իրենց նուրբ ու գեղեցկասեր ճաշակով մտցրին ամեն տեսակ առասպել՝ յուրաքանչյուրին (իհարկե, առավել երևելիներին) օժտելով առանձին պատմությամբ: Շատերի մասին էլ ասացին, թե Աստղ (Aster) անունով մեկի որդիներն են, որոնք իբր ուզել են տիրել Օլիմպոսին, բայց Արամազդից շանթահար՝ մի մասը վայր է թափվել, մյուս մասը մնացել է երկնքին կալած: Թե՛ սրանց և թե՛ արևելցիների առասպելները քննելն ու հիշելը կլինի շատ տևական և ոչ շատ հարկավոր: Բավական է իմանալ, որ ստի հետ ստույգ դիտողություններ էլ են եղել ու ընդունվել զանազան ազգերի մեջ . կան նույն կամ նման կարծիքներ մի քանի առանձին աստղերի, ինչպես և մոլորակների ու աստղակույտերի մասին, որոնք կոչվում են նաև համաստեղություններ (constellations) կամ աստղերի պարեր:

Վերաշարադրյալում մեր ազգի մասին ասվածից պարզ է, որ հայերս էլ ունեինք բավականին զարգացած ուղիղ կամ մոլար աստղագիտություն: Բայց (ինչպես ոմանք ասում են մի քանի աստղերի մասին, թե ավելի մեծ աստղի կտորտանք են) հայոց աստղագիտությունից էլ միայն կտորներ են մնացել՝ մեր լեզվի սեփական աստղանուններով: Կան և թարգմանված անուններ, ու հայտնի է, որ դրանց հետ թարգմանվել են նաև արևելցիների ու հույների աստղագիտական գրվածքներ որ այժմ էլ կան աղթարքներում ու տոմարներում: Դրանք մանր գրվածքներ են, որ եբրեմն անանուն են, երբեմն էլ տալիս են քաղղեացիների կամ Դանիել մարգարեի, ինչպես նաև մի քանի առանձին հեղինակների ու մոզերի անուններ: Այս ավանդության մեջ դժվար է գիտականը գատել կրոնականից, և վերջինս բացատրելու համար ստիպված ենք խոսել նաև առաջինի մասին և իրար խառնել սուտ ու իրավ աստղաբաշխությունը: Վերջինս, ինչպիսին էլ լինի, թեկուզև շատ անկատար, բանասերների համար կարող է դառնալ հետաքննության ու բաղդատության առիփ: Այս առումով պետք է ասել հետևյալը: Նախ հիշեցնենք, որ աստղագիտության հատուկ գրվածքներից գատ՝ մեր վարդապետները արարչության օրերի (առաին և չորրորդ օրեր) մասին գրելիս երբեմն այդպես էլ անում են: Եվ երկրորդ՝ որ ուղիղ աստղաբաշխության մեջ հիշված անուններն էլ (մասամբ) շատ հին են և հավանաբար մնացել են ազգային կամ հեթանոսական մերձավոր ավանդություններից, ոնոց սկիզբը

գտնելը փափագելի է, բայց ոչ հուսալի:

Նախ հիշենք մոլորակների (Planetes) անունները, որ Արեգակի և Լուսնի հետ յոթն են ու նշանակում են շաբաթվա օրերը: Բայց շատ անգամ, սրանից գատ, գրվում են հինգը . դրանք հետևյալներն են՝ հին ու նոր ազգային անուններով: Դիտելի է նաև այս երկանունությունը:

Վարդան վարդապետը շեթում թագավորին գրում է, թե Մեթի որդին՝ Ենովար, «արար նշանագիրս, և կոչեաց անուանս Մոլորակացո» (արդյոք ի՞նչ լեզվով):

Մեր հին անունները հիշեցնում են վերոհիշյալ հին ժամանակի մարդկանց արհեստները և միաժամանակ այն ձևերը, որոնցով նշանակում էին մոլորակները՝ փոխանակ նրանց անունները գրելու . Լուծ՝ը՝ արորադրող (հող վարող) եզների վզին դրվածը, Եղջերու՝ն՝ որսորդությունը, Ծկրավոր՝ն անծանոթ է և գրված պես-պես, ինչպես՝ Ծկավոր, ինչը մեր բանասերներից մեկը թարգմանում է «համառ», կամ Ծպավոր՝ զգեստի փեշի կամ կախ մասի նշանակությամբ, որ ծոպն է: Սակայն թվում է, թե Ծկոր նշանակում է նաև ուրիշ, հատուկ մի բան: Մոկքի և Ռշտունիքի միջև՝ Կարկառի վիճակում, կա այդ անունով մի գյուղ: Արևելագետները ասորական արձանագրությունների մեջ կարդում են Ծկուրատ՝ բոլորակ և պարուրաճև աշտարակի կամ դիտանոցի նշանակությամբ: Ավետիս Անդեցին իր տոմարագիտության մեջ գծել է  . կշեռքի՞ է նման, թե՞ այլ բանի: Արտախույրը սովորական իմաստով հատուկ գլխանոց կամ վերարկու է, այլ ոչ պարզ գդակ: Փեռագնոտի՝ն կամ Փառագնոտի՝ն, որ գրված է նաև Փառանձնոտ, ավելի անծանոթ է և ավելի դիցաբանական է թվում:

Արտախույրը՝ ըստ կարգի չորրորդը, հատկացնելով արարչության չորրորդ օրվան՝ Չաբարիա կաթողիկոսը գրում է . «Էացուցեալ զարեգակն՝ եղ ի հատուածն առաջին՝ ըստ եբրայական աստաթուին, և իշպանութիւն աստեղն Արտախուրի փայլեալ յարեւելից»: Ծննդոց գրքի մի մեկնիչ այս անունն ունեցող մոլորակներին տալիս է մեկական տարրի նշանակություն ասելով . «Յոյցք մարդկան արուեսք են հինգ աստղն . Լուծ՝ հող, Եղջերու՝ Ջուր, որ է այծ(°): Արտախույր՝ զմիտսն ասէ որ ի գլուխն . Ծպաւոր՝ զզգեստն ասէ, որ է Օդն . Փառագնոտ՝ զհուրն»:

Հեթանոսները (ըստ Անանիա Շիրակացու) բարերար էին համարում  
Լուսնաթագն ու Արուսյակը, խարդախ կամ չար՝ Երևակն ու Հրատը, «իսկ  
Փայլածուն՝ հասարակաց բնութիւն»:

Մոլորակներ ճանաչելը գալիս է շատ հնուց և աստղաբաշխության մեջ ծանոթ է  
ուսանողներից յուրաքանչյուրին: Մեր շատգետ Վարդան վարդապետը  
(պատմիչը), Եղիշի Ծննդոց գրքի մեկնությունից առնելով, գրում է . «Ի վեր քան  
գեօթն մոլորակս՝ եօթն այլ աստղ կայ նշանատրք, յոյժ ցրտագոյն և ամենեւին  
սատնամանիք . և են ի մէջ մոլարիցն և անմոլարից, և գիրաբորբոք ջերմութիւն  
արփոյն՝ նոքա յինքեանս առնուն» Մեկ այլ վարդապետ, նույն Եղիշեից առնելով,  
այս յոթ աստղերը կոչում է Ամպար աստղեր, թվում է՝ Անպար, այսինքն՝  
անշարժ, ինչպէս համարվում է բները:

Գրեթե բոլոր ազգերին քաջածանոթ այս աստղը կամ աստեղերը երկրի  
հյուսիսային կողմի վերևում են, որին նմանը կա նաև երկրագնդի հակադիր  
կողմում, և մեզանում դրանք կոչվում են Հյուսիսային ու Հարավային բևեռները  
իբրև առանցքի ծայրակետեր, որի շուրջը պտտվում է երկինքը (Ֆրանսերեն  
Poles): Երկրի մեծ մասի համար դիտարկման և նավարկության ուղեցուց է եղել  
Հյուսիսային բևեռը: Սրա մոտերքում Բագմաստեղքը (Pleiades): Մենք չգիտենք՝  
այս անունը բնիկ ազգայի՞ն է, արևելյա՞ն է, թե՞ հունական: Ըստ հույների այս  
աստղերը յոթն են և Ատլասի ու Պլեյոնի դուստրերն են: Հոբի գրքի մեջ այս  
անունով են թարգմանել մեր նախնիները . «Խելամո՞ւտ իցես կարգի  
Բագմաստեղաց» (ԼԸ, 31): Ոմանք Բագմաստեղքը նույնացնում են Բևեռի լծորդ  
Սայլ կամ Սայլք աստղերի պարին, որ յոթ աստղեր են՝ նման բոլորին ծանոթ  
կառքի չորս անիվների՝ դեկի ձևով շարված երեք ալ աստղերով, որոնք օտար  
լեզուներով կոչվում են Մեծ ու Փոքր արջ և այդպես էլ թարգմանվում են  
մեզնաւում: Բայց հին հայերի մեջ, ըստ երևույթին, չի մտել հունական այն  
այլանդակ մտածողությունը, թե իբր Կալիստոն՝ Արամազդի մի կինը,  
փոխակերպվել է արջի, և որդին՝ Արկասը, նրան տեսնելով ու չճանաչելով, ուզել  
է նետահարելով սպանել նրան: Արամազդը մայրասպանությունը խափանելու  
համար երկուսին էլ շանթահարում է ու փոխակերպում այս երկու արջային  
համաստեղություններին, որոնցից մեծը Արկասի և արջի անունով կոչվում է  
Արքտորոս: Նախնյաց թարգմանական մի գրվածքում ասվում է . «Հիւսիսային

աստեղքն՝ որ յոմանց Արքտորոս կոչին, իսկ յոմանց՝ Հեփտաս ազրոն (E ρφδτ Եսϕφռ), իսկ յերկրագործաց՝ Սայլ, և ի նաւավարաց՝ Բագմոյթ»։ Եթե շարված աստղերը ըստ ձևի Սայլ ենք անվանում, մեկ այլ հին և ծանոթ ավանդությամբ էլ մեզանում Սայլաթափ է կոչվել նույն Մեծ արջը կամ Փոքր արջը։ Չաքարիա կաթողիկոսը մի քանի այլ համաստեղությունների հետ հիշտակաւում է և այս . «Բեւեռքդ, որ կան ի մէջքն և ի ծիր և ի կուտակ երկնից՝ փոքր ինչ վերամբարձ քան գՍայլաթափդ, և նա է մէջասահման երկնից, ոչ ուրեք ճանապարհագային հեռաւորութեամբ . և համօրէն բոլոր համաստեղատունքդ՝ գնորքօք պարատեալ շրջագային . և Ծիրածանս՝ որ հատանէ գերկինս՝ իբրեւ գԾիր կաթին երեւեալ, և իբրեւ գկաճ շրջագայի, գոր մանկտիդ ի խաղաղ վարեն, այնպէս պարաբերի յարեւելս և յարեւմուս, ի հիւսիսի և ի հարաւ . և յառաւել խտութենէն միաշար և առանց միջոցի երեւելս և յարեւմուս, ի հիւսիսի և ի հարաւ . և յառել խտութենէն միաշար և առանց միջոցի երեւին . գոր գեղջուկքդ Յարդագող անուանեն» :

Մեզանում Սայլն ունի այլ անուններ ևս։ Դրանցից է Ալավունքը, որի ստուգաբանությունը անհայտ է։ Հին հայկական մի անվանություն են գուշակել տալիս Բագմոյթը և Բագմոյթը . գուցե սա ոչ այնքան բագմոյթյան իմաստն ունի, որքան բագմելու՝ որպէս սայլավարի նստարան։ Գուպարքը իբր աստղերի (թերևս կովարար) մի խմբի անունն է։ Կա նաև Վեցկի անունը . ըստ ռամիկների՝ Գութանի աստղ։

Սայլի չորս կողմերի քառակուսին ձևացնող աստղերն էլ Խաչաստղ են կոչվում։

Չով անունը նշանակում է Սայլը կամ Բագմաստեղը . նրա ծագումը մեզ անհայտ է։ Նույնը վերաբերում է նաև Աստղակոյտ անվանումը։ Եվ ավելի հեթանոսական է Մանկունք Չրվանա անունը, որ պարսկերեն աղանդ է հիշեցնում։ Այս մեկ կամ երկու աստղերի պարերի այսքան շատ անունները չէին կարող լինել միայն մեր ընտիր թարգմանիչների մտքի ծնունդ, այլ գալիս էին նրանց հին և հեթանոս հայրերի հավատքից ու զանազան ավանդություններից։ Իսկ դրանց յոթ թիվը տարածված է նաև այլ ազգերի մեջ, և կարող ենք ասել Ս . գրքի ավանդությամբ։ Մեր քրիստոնեական հավատքում էլ հաճախակի է դարձել Երկնքի յոթնաստեղյան խորաններ ասելը՝ իբրև երկնքի յոթ մասերը կամ կարգերը՝ մեկը մյուսից բարձր։



Վերոհիշյալ կաթողիկոսի հիշատակած մի աստղակույտն էլ աստղաբաշխության ամենանշանավոր մասերից մեկն է, ինչը արևմտյան ազգերի մեջ կոչվում է Ծիր կաթին՝ ըստ հույների առասպելի: Այն իբր գոյացել է Հերայի կողմից Հերակլեսին կաթ տալու ժամանակ թափփած կաթից (!): Դա երկնքի երեսին տարածված ընդարձակ և երկար, նվազ կամ ճերմակ լույսով մի տարածություն է, ինչին կաթողիկոսը տալիս է ծիածանից տարբեր՝ Ծիրածան անունը: Հայերս սրա վերաբերյալ ունենք յուրահատուկ ազգային ավանդություն, ինչը հիշատակում է Անանիա Շիրակացին. «Ոմանք յառաջնոցն Հայոց ասացին, թէ ի խիստ ձմերանի՝ Վահագն նախնի Հայոց՝ գողաավ գյարդ Բարշամայ Ասորեստանեայց նախնոյ . գոր և մենք սովորեցաք բնախօսութեամբ Յարդագողի հետ անուանել»: Ահա ավելի լավ մի առասպել, քան հույների պիղծերը: Եվ զարմանալի է, որ թուրքերենում ևս երկնքի լուսավոր գոտիանման կամ գետանման մասը կոչվել է Սաման յոլու (ճիշտ «հարդի հետք») կամ օդրուսու («գողացող»): Ճանապարհ Արեգական հին անվանումը թերևս տվել են որոշ աստղաբաշխներ, որոնք հիրավի համարում են, որ Արեգակը մասնակիորեն շեղվում է Կենդականամարի գծից: Դարձյալ հույները սրա նման իրենց Վահագնի՝ Հերակլեսի մասին ասում էին, թե եռագլուխ Գերիոն թագավորին (Էրիթեոս կղզու) և նրա երկգլուխ շանը սպանելով՝ նախիրները քշեց-տարավ, և դրանից ձևավորվեց այդ երկնային ճամփան, ինչը հիշելով՝ Փիլոն Եբրայեցին էլ «կամար շութափ արագընթաց Յարդագողի» է կոչում՝ ըստ մեր թարգմանչի: Եվ քանի որ հարդը դրվում է ախոռում և անասունների մսուրում, ասվում է նաև Մառք մսուրի, ինչպես գրում են հնում . «Օդքն երկնայնոցն են Կառս մսրի, գոր ի հայերէն բարբառ Յարդագող կոչեն . և այս է Մսուր՝ աման օդոցն փանձրայնեաց, գոր տեսանենք ի գոյն սպիտակարանի»:

Սպիտակարան նշանակում է «բուռ, գաջ», որով պատ են ճերմակացնում:

Հարդագողը կոչվել է նաև Հեծանոց, անշուշտ, հարդը հավաքող և ցրող փայտի պատճառով, քանզի բառը այդ է նշանակում: Հիմա էլ ռամկորեն կոչվում է Սանամոր դարմանագող, իհարկե, Վահագնի և Բարշամի մասին ավանդության նման մի ավանդությամբ:

Չաքարիա կաթողիկոսի ճառում գրված Ծիր կաթին և Ծիրածան անվանումները մեզ հիշեցնում են ծիախան անունը: Մեզանում սովորաբար

այդպես է կոչվում երկնքի երեսից կախված՝ անձրևի ու լույսի շաղվածքի գունագույն, բայց սակավատև ու գեղեցիկ կամարը, որ աշխարհակույ ջրհեղեղից հետո, ինչպես ասում է Ս . գիրքը, Աստված ցույց տվեց մարդկանց՝ իբրև հիշատակի նշան, որ այլևս «ոչ եւս եղիցի ջրհեղեղ ջուրց՝ ապականել գամենայն երկիր, զԱդեղն իմ եղից յամպս, և եղիցի ի նշանակ յաիտեննական ուխտեին ընդ իս և ընդ ամենայն երկիր . և եղիցի ի գումարել ինձ գամպս ի վերայ երկրի, երեսեցի Ադեղն իմ յապս, և յիշեցից գուխտ իմ որ ընդ իս և ընդ ձեզ»:

Օդում տեսանելի այս այլևայլ գույները նշմարելով հիրիկ ծաղիկի վրա, որը հոռմեացիները և հույները իրիս (Iris) են կոչում՝ ստեղծեցին Հերայի իրիս անունով նաժիշտին, որին հավատարիմ ծառայության համար տիկինը փոխարկում է ծիածանի կամ նրա վրա եղածի: Հայերեն անունը ընծայում է թե՛ ծավալման, և թե՛ ցուլացման իմաստ: Գույներից երկուսի՝ հայերի աչքին առավել զարնվելու պատճառով օդեղեն երևույթը ռամկորեն կոչել են կարմիր-կանաչ և ավելի հստակ ու ընդհանուր՝ ծիրանի գուտի: Իսկ Անանիա Շիրակացու՝ կոչվել է նաև Աստվածակամար, բայց թվում է՝ քրիստոնյաների կողմից, ինչպես ներկայումս ժողովուրդն ասում է Աստվածածնի գուտի:

## Հայկ

Վահագնին երկնքում դասող հայերը, իհարկե, չէին կարող իրենց գերագույն դյուցազնին՝ Հայկին, տալ այլ տեղ, քան ամենապայծառ աստղատունը, որը արևմուտքում կոչում են Օրիոն (Ահրամ): Օրիոնը ծովի չաստված Պոսեյդոնի կամ Նեպտունի և Էվրիալեի առասպելյան որդին է, քաջ աստղագետ և որսորդ, որ հանդգնում է Անահիտի հետ մրցել նետածգության ասպարեզում և վերջինիս նախանձից կարիճի խայթոցից մահանում է: Դիցուհին գղջում է և նրան փոխակերպում է մեծապայծառ աստղի: Հայերի ավանդությունն էլ իրենց Հայկին գրեթե գուգահավասարում է հունականին: Իբրև Հայկի հատնակիշ՝ նշվում է քաջ աղեղնավոր լինելը և իր երեքթևյան նետերով իր ախոյանին՝ Բելին, սպանելը: Հայկը համարվում է առաջին տոմարադիրը, որ ժամանակի և տարվա չափն ու շրջանը որոշողն է: Եվ սա, իհարկե, արվում է աստղագիտությամբ: Այս երկու առավելություններով Օրիոնն ու Հայկը իրար նման են: Վերջինս միշտ և տառի հավելումով կոչվում է Հայկն, երբ հիշվում է որպես աստղ կամ աստղատուն:

Թեև, ըստ աստղաբաշխների, պայծառագույն աստղը մեկն է (որ, ըստ նրանց, առանձին անունով կոչվում է Betelgeuse կամ Adaher), այլ աստղերի հետ կազմում է մեկ համաստեղություն կամ պար, ինչը (նաև ուրիշները) երկնագրության կամ աստղացույցի վրա նշանակելու համար կերպավորում են (կենդանու կամ) մարդու կերպարանքով և աստղերը շարում են նրա այլևայլ մասերի վրա՝ յուրաքանչյուրին տալով գատ-գատ անուններ: Այսպես և (մնացածը թողնելով) գատ-գատ անուններով երեք միաշար պայծառ աստղերը, որ կոչվում են նաև Երեք թագավոր, համարում են Օրիոնի գոտի: Մա թերևս լինի հայերի իրենց նախահայր դյուցազնի անունով Շամփուրք Հայկին կոչվածը: Հասկանալի է, թե սովորական իմաստով ինչ է նշանակում շամփուր (միս խորովելու երկար մետաղաձող, նաև գենքի ու սպանության սլաք), բայց շամփրակ և շամփրակ մեր հին լեզվով նշանակում են նաև «պսակ»: Որն էլ լինի, Օրիոնի պես Հայկի հետ հատուկ և նախորդի նման մի բան էլ է զուգորդվում Ապա՝ Օրիոն որսորդը ունի նաև երկու շուն՝ մեծ ու փոքր, որոնց վզկապները բռնել է ձեռքով: Հայկը իր ոտիս Բելին ու նրա գորքը ևս կոչեց շուն: Որքան էլ այս պատմությունները համարվեն առասպելներ ու վիպասանք, երկու բան պիտի իմանանք . նախ՝ Օրիոնի և Հայկի նմանությունը, և ապա՝ այն, որ եթե դա նույնիսկ լինի մեր հին հայկազունների գյուտը, և եթե մեր երանելի ու քաջ թարգմանիչներն են Հայկին պայծառագույն աստղատանը տեղավորել, դրսևորել են ազգային պանծալի ստածողություն . նույնիսկ եթե Հայկը հնարված լիներ, սուրբ են նրանք, ովքեր մեզ ընթերցել են տալիս Ս . գիրքը և լսելի են դարձնում Աստծո՝ իր ամենակարողությունը ցույց տալու ձայնն առ Հորը (ԼՂ, 31) . «Միթե դո՞ւ բացեր գՊատրուակ Հայկին», և եսայի մարգարեի շուրթերով իր գործության սպառնալիքը բաբելացիների բռնավորներին . «Ահաւասիկ օր Տեառն հասեալ է անհնարին լի բարկութեամբ, ռխակալութեամբ, սրտմտութեամբ, առնել գտիեզերս անապատ . . . զի աստեղք երկնից՝ Հայկին հանդերձ և ամենայն գարդուն երկնից՝ լոյս մի՛ տացեն» (ԺԳ, 10): Ավա՛ղ, լատիներեն թարգմանության մեջ աստղերի այս դասապետը չի հիշատակվում, այլ ասվում է միայն պայծառագույն աստղեր (Stellae coeli et splendor earum), իսկ Հոբի հիշատակած Հայկի պատրվակ-ի փոխարեն ասվում է . «Կարո՞ղ ես Արկտուրուսի (Հայկի) շրջանը շփոթել կամ դադարեցնել» (Gyrum Arcturi poteris dissociare?): Մինչ այստեղ Հայկի, այսինքն՝ Օրիոնի անունը հռոմեացիների մոտ լռություն է մատնված, իսկ այլ տեղում (Թ, 9) Արկտուրուսը և Օրիոնը հիշատակվում են

միասնեղ (Qui facit Arcturum et Oriona et Hyades et Interiora austri), որին հակառակ՝ մեր թարգմանության և հունարեն բնագրի մեջ Հայկի անունը չկա, այլ գրվում է . «Որ արար գԲագմաստեղսն և գԳշերավարն, և գՄայն, և գՇտեմարանս Հարառոյ»: Այս վերջին անունը ևս դիտելի է որպես հայկական անուն մի համաստեղության, որը լատիներեն ճանաչել է տալիս որպես երկնքի հարավային կողմերի խորքերում ծածկված աստղեր, որոնց փոխարեն, եթե հայերենի ներկայացրածը մի ազգային առասպել էլ չակնարկի, միշտ վսեմական է Շտեմարանք հարավի կոչելը: Եվ արդարև, հարավային համաստեղությունները, թեև պայծառ են, սակայն մարդկանց բազմությանը ավելի սակավածանոթ ու անտեսանելի են, քան հյուսիսայինները:

Բայց մեզ համար առավել հետաքննելի էր իմանալ, թե ըստ հայոց հին ավանդության՝ ինչ էր Հայկի պատրվակ-ը, որ նոր դեպք կամ հիշատակ էլ է ավելացնում նրա ստույգ կամ վիպական պատմությունը: Այս պատմության մնացորդը ըստ աստղապաշտական տեսության լրացնելու համար (մեր գիտության չափով) ավելացնեն, որ ըստ ոմանց՝ Հայկ է կոչվում նաև Կենդանակերպի Կշեռք համաստեղությունը (Արեգակի 12 տներից մեկը), որի թաթերը երրորդ կարգի մեծության երկու աստղեր են: Ոմանք Կշեռքը և Շամփուրք Հայկինը նույն են համարում, ինչպես ասում է նաև երեմիա մեղրեցի բառարանագիրը . «Հայկն՝ Կշիոն է, զոր ոմանք Շամփուրս ասեն»: Եվ մինչև հիմա շինականները այդ կողմի աստղերը կոչում են Շիշ և Շամփուր, Քար և Կշեռք: Ոմանք Հրատ մոլորակը ևս համարում են Հայկի անունով կոչված: այս շիկակարմիր մոլորակը և նրա պատերազմի չաստված անձնավորը (ըստ հռոմեացիների՝ Mars, ըստ հույների ԿՅՅՏ՝ Արես) անպատշաճ չէին մեր՝ պատրեագմի և քաջության նախօչինակ, խայտակն ու քաջագանգուր կոչված Հայկի կերպարանքին ու արիությանը, մանավանդ եթե ներվի վերոհիշյալ Օրիոն-Հայկ գլխավոր աստղի անունը (Adaher) Ադրահեր կարդալը, այսինքն՝ «հրագիսակ, հուր-հեր»՝ ըստ Վահագնի: Այս իմաստով (իբրև Հրատ-Արես) աղթարքները ասում են, թե Հայկի աստղատան ներքո ծնվածը կմեռնի երկաթից:

Վերը հիշեցինք Օրիոնի (Հայկի) շները, որոնք Ադահեր մեծ աստղի հետ աջ ու ձախ կողմերից հյուսիս ուղղված եռանկյուն են ձևավորում: Մեծը, որն աստղերից ամենապայծառն է, և որն աստաբաշխները կոչել են Սիրիուս (Sirius), մերոնք

անվանում են ահտուկ Շնիկ աստղ . դա եգիպտացիների Սոթիս կոչվածն է, որից էլ՝ Սոթիական շրջանը, ինչը մեզանում կրում է Շրջան Հայկին անունը, որի ինչ լինելը այլևայլ անգամներ բացատրվել է մեր օրերում: Այստեղ թող բավական համարվի նորից միտքը անդրադարձնել Հայկի հնության ու աստղագիտության վրա՝ հավասար կամ բաղդատված եգիպտացիների հետ, որոնք Սոթիական կամ Շնիկի 1461-1460 նահանջ և աննահանջ տարիների շրջանում միացնում են կրոնական ու քաղաքական տարիների սկիզբը: Արդ, կամ Շնիկն էլ Հայկն համաստեղության մասը կամ նույնը համարելու, կամ հնում այս շրջանի ստույգ ծանոթության պատճառով և սրա անունով հայերիս մեջ կոչվեց Շրջան Հայկին, որով և նրա դյուցազնական պատիվն էլ մի նոր հաստատություն է առնում:

Հայտնի չէ՝ Փոքր շան մեծագույն աստղը, որ պրոկիոն է կոչվում, հայերեն հատուկ անուն ունե՞ր, թե՞ ոչ: Նրա լույսը հազիվ է հավասարվում Մեծ շան լույսի մեկ երրորդին: Շնիկը իր պայծառության համար կոչվում է նաև Արամագդի աստղ:

Հայերեն անուններով ծանոթ համաստեղությունից մեկն է Եզողը, որ, թեև թվում է օտար լեզվից արված թարգմանություն (ինչպես և ֆրանսերեն Bouvier-ը), նաև գրվում կամ կոչվում է Ջովաղ կամ Ջովող: Սրա գլխավոր աստղը վերոհիշյալ Արկտուրոսն է (Arcturus) ամենամեծ ու պայծառ աստղերից մեկը, որը և՛ ունի գունագույն ցուլմունք, և՛ նրա փոփոխությունները ավելի հայտնի են երևում, քան մյուսներինը: Հավանական է, որ սա էլ է ունեցել հայերեն հատուկ անուն, գուցե և Գուրանի աստղն է, որը հիշատակվեց Սայլի հետ:

Կենդանակերպ 12 համաստեղությունները, որ կոչվում են նաև Արեգակի աստղատներ (քանզի արեգակը յուրաքանչյուրի սահմանամիջում մնում կամ ընթանում է մեկ ամիս, և տարի բոլորում է), հատուկ անուններ չունեն ոչ մեր, ոչ այլոց լեզուներում: Ամենքն էլ թարգմանել են հին եգիպտական անունները Խոյ, Ցուլ, Երկվորյակ և այլն . միայն Ավելյաց հինգ օրերի տանուտերն է, որ մեզանում կոչվում է Արտախույր: Բայց թեթև հավանականությամբ կարծում են՝ այդպիսիներն են նշանակում Տանուտերք տարվա կոչվածները, որոնցից մի հին տոմարի մեջ նշանակված են միայն վեցը: Դրանք են՝ Վիշապ, որի անվամբ համաստեղություն էլ կա (Dragon), Կուզ վիշապ, Խվակն կամ Խիփակ,

Խոլովակն, Կապարին, Բագնոտանին: Վերջինս կարող էր նույնացվել  
Խեցգետնի հետ, եթե բավական հավանական լիներ նրա ևս 12  
Կենդանապանների թվից լինելը:

Ըստ Կենդանակերպի անունների՝ ախտարմուկները պես-պես հատկություններ են  
հարմարեցնել նրանց: Դրանցից է Անանիա Շիրակացու (կամ մեկ ուրիշի)  
հիշատակածը. «Խոյն՝ ունի գիշապանական, գգեղեցկական, գգանգրական  
հերսն. — Տույն՝ ունի գուժեղնական. — Երկաւորեակն՝  
գմիջասահմանական. — Խեցգետինն՝ կողմանաւոր է և գէջ. — Առիծն՝ բբջող  
է և հողային, մեծակն է, խնգարական և գոռոզ. — Կոյսն՝ զարդասիրական է,  
գէջ և գեղեցիկ. — Կշիոն՝ հաւասարական է և զարդարական. — Կարիճն՝  
ծնելական և խոժոռակն. — Աղեղնաւորն՝ պատերազմողական է և զօրաւոր. —  
Այծեղջիրն՝ զանգիտական է անբանական. — Ջրիոսն՝ զիշական է և  
խառնական. — Ձուկն՝ բարեխառնական է, և ընդդէմ հարկանէ»: Այս  
Կենդանակերպների տակ սահմանված էին երկրի աշխարհագրական մասերն ու  
ազգերը: Ըստ այսմ՝ «Խոյն, Տույն և Երկաւորին Պարսք և Բաբելովն, որ կոչին  
Տուն տերունական. — Խեցգետին, Առիծ, Կոյս, Հայք և Գորդիակք  
(Կորճայք—Ղ. Ա.) և Յոյնք, որ կոչին Գիշերականք և Կողմնացիկք. — Կշիոն,  
Կարիճն, Աղեղնաւորն, Այծեղջիր, Ջրիոս, Ձուկն, տուն՝ որ մէջ է ընդ ամենայն  
երկիր»:

Սրանցից յուրաքանչյուրը դարձյալ մանրամասն նկարագրված է իր ներքևի  
երկրներով ու ազգերով. դրանցից «Խեցգետինն ձօնեալ է նահանգին Հայոց»:  
Աղթարական գրքերում շատ ու շատ հարմար ու անհարմար բաներ են գրված  
Կենդանակերպի ազդեցության մասին:

Սրանցից գատ հիշատակված կամ մեր հանդիպած աստղերի հայերեն  
անունները հետևյալն են, որոնց որ համաստեղությանը պատշաճելը չգիտեն:  
Միայն նորերս լսած Լույսի աստղը, որ Կենդանականարի Կշեռք նշանի ներքո է,  
համարում ենք նույն Եզող համաստեղության վերոհիշյալ Արկտուրուս պայծառ  
աստղը: Իսկ Կշեռք-ը մի հին տոմարի մեջ գրված է Խափանք: Վանանդեցին  
(Ղուկաս) Կալիոպե համաստեղությունը անվանում է Սևադեմ աստղ:  
Ներկայումս այս անվամբ է կոչվում նորահայտ մի փոքր մոլորակ ևս:

Տոնարական և աստղագիտական մի գիրք վերոհիշյալ հայտնիների հետ խառն գրում է և այս անծանոթները բոլորն էլ միաժամանակ կոչելով Խառնարան աստղեր: Դրանք են .

Շնաստղ կամ Փոքր շնիկ

Խոլովակն կամ Խողովակ կամ Հոլովակ

Վաքն կամ Վանքն

Ծիծառն

Մեծ արջ կամ Սայլ

Փոքր արջ կամ Մյուս սայլ

Վիշապ

Թռչման Ձի (Պեգաս)

Ջրօձ

Բազմոտանի

Բևեռքն երկնից

Խիփակն

Մարգոն

Կարճնդյաց (Կովադյա՞ց)

Ճոկանոտ կամ Կոճնատոն (Կոճանո՞տն)

Ջրաբաշխ (միթե՞ Ջրիոս տանուտերը)

Խոզ (նոր գրողը հիշատակում է և Վարազ՝ այն գուգորդելով Հրատին)

Անդիակն (հիշեցնում է Հայկի գոտու Անիտակ աստղը)

Արկողն

Մրանց գատ հիշատակված է նաև Հանկն (գուցե Հայկն), որի նշանաձևը Սողոմանի կնիքն է:

Ավետիք Ամդեցին Հայկ համաստեղությունը հիշատակում է որպես մի աստղերիպար, նույնպես և Հովիվը, Արծիվը, Քերքեզը, Քնարը, Սողոմոնի աթոռը, Տորենքաղ մշակը, Մեծ շունը, Պատերազմիկ աստղը, Գայլը: Խառնարան աստղերը հիշտակողը ավելացնում է հետևյալը . «Այս աստեղք են, որ ցուցանեն գանձրեւաց սաստկութիւն . և որ ի ծովուն գնանք սոքիմք՝ մանաւվանդ Սայլն՝ յանտնի ցուցանէ գնաւագնացաց հետ . զի հիւսիսական աստեղքդ ոչ են գնացականք այլ կացականք, և շարժեալ ի վերին եօթն

գօտեացն՝ որպէս ի ծովու այլեկոծին: Այս են նշանացոյց աստեղք . տխմարք եպերեն, որ շեն գիտեն գգիրս, այսմ վասն գրէ, եթէ՝ Եդ գնոսա Աստուած ի նշանս և ի ժամանակս»:

Այստեղ կան նաև մեկ-երկու բառաբարդյալ անուններ, որ շեն նշանակում հատուկ մի աստղ, ինչպէս՝ ելաստղ և անկաստղ, որ նշանակում են Շնիկի բարձրանալը և ցածրանալը կամ երևալն ու աներևութանալը: Սրանք մի քանի անունների հետ հիշատակվում են նաև նորագույն տոմարներում: Այդ անուններն ունեն առավելապէս կրոնական կամ աղթարական իմաստ, ինչպէս Ըմբռնաղը՝ նոյեմբերի 23-ին կամ հայոց տրե ամսի 15-ին: Տոմարներում գրված է . «Որ զինչ այսօր լինի, ձմեռն այնպէս անցանէ, թէ ջեր է և թէ ցուրտ է, թէ պարզ և թէ ամպ»: Հնագույն մի տոմարում գրված է Բռամաղ կամ Բռումաղ և ասվում է մի տոնի մասին, «գոր պատունն Քաղէացիքն . այլ կատարելն հինգ ամք են», այսինքն՝ հինգ տարին մեկ անգամ, ինչպէս հույների օլիմպիադաները: Ոմանք էլ այս բառը մենկաբանում են ըստ մեր լեզվի՝ աղով բռնել ոչխարներին և ժողովել փարախում ձմեռվա սկզբին՝ ս . Հակոբի տոնի օրերին: Սա որոշակի ձևով համապատասխանում է մեր Նախրթող կոչվածին: Բանասերներին ենք թողնում ստուգել, թե արդյոք Բռումաղը Գանգեսի հարավային կողմի հնդիկների Վինշու չաստվածը չէ, որին այդ անունով են կոչում, ինչը ֆրանսերեն Peroumal է գրված: Մեզանում գրվել է նաև Բռնալալ:

Տոմարներում Գայլավազ մի անուն էլ նշանակվել է մարտ ամսի 9-ին կամ 10-ին: «Եւ գսա պատունն Քաղէացիք . . . որպիսի օրս այս լինի գ՛60 օր»: Բայց թվում է, թե գարնանային հասարակածին վերաբերող հիշատակ պիտի լինի, երբ արեգակը մտնում է Խոյ աստղատուն: Արդյոք խոյագող գայլն էլ առասպելական վագր ունի՞ այստեղ, որովհետև այդ բառի (ունենք նաև գալվազ ձևը) իմաստը հայերենում որոշակի է (եթե ք տառով գրված լիներ՝ քայլվազ, արեգակի ընթացքի և օրերի երկարելու մասին էլ կարող էր մտքում կարծիք արթնացնել):

Հաստատուն (աչքով տեսանելի) աստղերից գատ՝ բոլորին ծանոթ են նաև անհաստատ կամ հանկարծահայտ լուսատուները, որոնք առ այսօր շատ տեղերում չիմացող մարդկանց թվում են ահարկու կամ չարագուշակ: Առավել ևս



այդպես էր հեթանոսների, անտարակույս նաև մեր ազգակիցների մեջ, որոնց ինչ կարծիք և հավատք ունենալը հայտնի չէ: Բայց քանի որ լուսատուները նրանց քննախույզ աչքից չէին վրիպել, իհարկե, ունեցել են նաև առասպելական կամ կրոնական կարծիք: Մովորաբար այդօրինակ լուսատուների երեք անուններն են հիշատակվում և այսպես են մեկնաբանվում ս . Բարսեղի գրվածքի մեկնության մեջ . «Վարսաուրքն (կամ Գիսաուրք, որ և Նիգակաուր կամ Նիգակաան և Ագետր), և Հեծանակք և Գուպարք . Սորա ոչ են աստեղք, այլ ի յօդդ երեւի՝ ի հարմանէ օդոյդ յիրեարս: Վարսաուր այն է՝ որ երեւի երբեմն յօդդ աստեղածեւ, և ագի ուննայ: Եվ Հեծանակք, որ ոչ բոլոր և ոչ ունելով ագի իբրեւ զվարսաուրն, այլ երկայն ցոլումն լինի իբրեւ զհեծան: Գուպարքն՝ որ մեծ բոլոր երեւի (Falot?) , ոչ վարսաուր և ոչ հեծանածեւ: Ըստ զանազան ձեռոցն և յորջորջումքն՝ այս է անուանքն՝ նման ձեռոցն եղաւ . բայց լինելութիւն նոցա ի մի և ի նոյն պատճառէ, զոր Ուխշար ասէ, անդ լինի . Ուխշար՝ զօդդ ասէ, որ շուրջ զերկրաւ է, յորժամ յերկրէ բարձրանայ մերձ յարփին . զի որպէս նիւթ հրոյ՝ երկաթ և քար՝ բախեալ՝ կայծակունս արձակէ, այսպէս թանձր և պղտոր օդ՝ ի վեր ծառացեալ բոնութեամբ հողմոյ՝ ի ներքս անկանի, և հարմամբն յիրեարս՝ որպէս աստեղ երեւումն տայ: Չայսպիսիս՝ Վարսաուր և Հեծանակ և Գուպար ասեն»: Թողնում ենք մեկնիչի իմացության չափը . նա առավելապես օդերևույթ է նշում, քան լուսերևույթ, և չի հիշում Ասուպ կամ Թոհիչ աստղը (Etoile filante), որի մասին այլազան կարծիքներ են հայտնել հասարակ մարդիկ, ինչպես նաև նարնց և մեր հեթանոս հայրերը: Մի հին գրիչ՝ գուցե Անանիա Շիրակացին, սա անվանում է «աստղ, որ ձգի յօդսդ, ի շփելոյ հողմոց լինի», որտեղից կրակի ելնելն է երևում իբր էլեկտրականությամբ, և հրին դիմանալու համեմատ՝ աստղը ձգված է լինում տևականորեն կամ առժամանակ:

## Եղանակներ

Ս . գիրքն ասում է, որ լուսատուների անհրաժեշտությունն ու գործը ստուգությամբ երկու բանի համար սահմանեց Աստված . մեկը՝ «ի լուսաւորութիւն՝ ի վերայ երկրի, և մեկնել ի մէջ տուրնջեան և գիշերոյ», և մյուսը՝ որպէսզի «եղիցին ի նշանս և ի ժամանակս, և յաւորս և ի տարիս»:

Ուղղահավատ և ծոահավատ՝ ամենքն էլ ավելի կամ պակաս քննությամբ և

գիտությամբ այդպես են ընդունել և արել . արեգակով սովորաբար չափել են տարին, լուսինով՝ ամիսները, աստղերով գիշերվա ժամերը կամ պահերը, երբ երկրի թավալմամբ նրանք երևում են գենիթից կամ գագաթնակետից քիչ-քիչ դեպի հորիզոն խոնարհված: Լուսաստունների այս գնումներին հաջորդած պաշտամունքը հիշեցինք: Մեզ մնում է իմանալ, թե արդյոք սրանց առերևույթ շարժման տևողությունը ևս, որ ժամանակն է և նրա մասերը, պաշտել են հայերը, ինչպես հույները ունեին ժամանակի մի Քրոնոս չաստված, պարսիկները կամ զանդիկները՝ Ջրվան: Ասվածը վերաբերում է նաև ամիսներին: այս մասին հայերի մոտ հայտնի նշան չկա: Չկա նաև տարվա չորս եղանակի պաշտամունք կամ անձնավորում, ինչպես կա բազմաստված հույների մոտ: Բայց որքան էլ տարվա այս բաժինների անունները դիցական բնույթ չունեն, և հնչմամբ կարելի է մի քանի նմանություն գտնել օտար լեզուների հետ, դարձյալ իմանալու բան է երկու բարեխառն եղանակների հայերեն անունների գույգ վերջահանգը՝ գարուն և աշուն, ինչպես և երկու բարկ եղանակներին՝ ամառն և ձմեռն: Այսպիսի անունները պատահականության արդյունք չեն, այլ հնարված են թվում խելամտորեն, ինչը թողնում ենք պարզելու հնարագետներին և բանասերներին դրանք բաղդատելով օտար ազգերի ու լեզուների ունեցած անվանումների հետ:

Մեզ հանդիպածը (եթե ճիշտ գրվել և ընթերցվել է) աշնան ուշման անվանումն է հին հնդկական սանսկրիտ լեզվում . առավել նմանությամբ՝ Ավեստայի լեզվում ձմեռը կոչվում է ձմեա, իսկ որ մեզանում ծմակ են կոչվում հյուսիսային կողմը, խոնավ ու սովերոտ տեղերը, որտեղ գուցե հայր ուներ պատելի կամ խորշելի մի ոգի: Այս եղանակի անունն ու բերածը (ձյուն) օտար ազգերից շատերի մեջ լսվում է մերձավորապես նմանահունչ . հունարեն՝ Χειμωα, լատիներեն՝ Hiems, Hibernus, սանսկրիտ՝ հիմա («ձմեռ»), հունարեն՝ Χίμα («ձյուն»): Հնդկաստանի քյաֆիրները ձյանը ասում են ձին, ձմռանը՝ ձյուն, զանդիկները ձյանը՝ ձիայո, ալանները ձմռանը՝ սիմեն: Ամառը Ավեստայի լեզվում կոչվում է համա, և զարմանալի համադրությամբ անգլերեն Summer ու գերմաներեն Sommer բառերը նշանակում են «ամառ», մինչդեռ հնչմամբ մոտ են ձմեռ անվանը:

Հայոց Նոր տարվա տոնը, որ մի կեսով քաղաքական և մյուս կեսով կրոնական հանդես էր, թողնում ենք հիշելու դիցական պաշտամունքը քննելիս:

Տարին 4 եղանակի բաժանելու պես 12 ամիսների բաժանելը ևս ընդհանուր է գրեթե բոլոր քիչ թե շատ քաղաքակիրթ ազգերի մեջ՝ օրերի պես-պես քանակներով և ավելին ու պակասը լրացնելու կերպերով, ինչը պատշաճ է պարզել տոմարագիտությանը: Ներկայումս մեր գործածած տոմարների կամ օրացույցների մեջ էլ հիշատակում ենք նաև հայկական ամիսների անունները, որ բոլորին են ծանոթ, բայց ոչ ծագումով: Եվ ոչ էլ ի սկզբանե բոլոր ամիսներն են ունեցել այս անունները, այլ փոփոխություններ և խառնուրդներ են եղել, և այդ պատճառով էլ իմաստով իրար նման չեն: Բայց քանի որ մեր խնդիրը կրոնական հավատքին է վերաբերում, կամենում ենք այդպիսի նշան ունեցողները գատել, իսկ մյուսները՝ հիշել ըստ հարկի:

Մեր միջին դարերի վարդապետներից ոմանք շատ դյուրամտությամբ, գուցե Հայկի ընդգծուն պատվարդությամբ ասել են, թե այդ 12 անունները նրա 12 որդիների ու դուստրերի անուններն են, մինչդեռ ծանոթագույն որդիների (Արմենակի և այլոց) անունները նրանց մեջ չկան: Հնարավոր է, որ մի քանիսը հատուկ անձանց ու դյուցազունների անուններ են, բայց մնացածները պատշաճում են եղանակներին:

Առաջինը նավասարդն է, որ երկու ձևով է դրվում որպես տարեգլուխ՝ բնական և քաղաքական: Ըստ վերջինիս՝ սկսվում է ներկայիս օգոստոս ամսվա մեջ, իսկ ըստ առաջինի՝ մարտի գիշերահավասարին կամ գարնանամուտին: Եվ այդ ժամանակ, ամիսների շարքն էլ շրջելով, արեգը (պատշաճորեն) դառնում է տարվա առաջին ամիսը: Հայերենով եղել են նավասարդ անվան այլազան ու անհամար ստուգաբանություններ: Շատ հավանական է, որ այն ծագում է հին հնդիկներից՝ նավա-սարատա անունից, ինչը նշանակում է «նոր տարի» կամ «նոր շատ»: Երկրորդ և երրորդ անսանունները շատ օտար գուգադիպությամբ նշանակում են վրաց լեզվի երկու և երեք թվերը: Սա, որքան հարմար է ամիսների թվակարգին, այնքան էլ խորթ ու անընդունելի է հայ հոգուն, որ կարող էր հակառակորեն ասվել, թե իր երկրորդ և երրորդ անսանունները վրացիներն են իրենց թվահամար արել: Երկրորդ անսանունը՝ հոռին, ըստ վերոհիշյալ վարդապետների, Հայկի մի դստեր անունն է: Ավելի լավ չէ՞ր լինի ասել, թե կոչել են Հայկի հանրածանոթ Խոռ որդու անունով և պատվի արժանացրել եգիպտական Հորի (Orus) պես, թեև հույների և հռոմեացիների մոտ

հիշատակվում է գեղեցկության Հորսա դիցուհին (որից հեռու չէ խորտիկ անվանումը, որ մեզանում ասվում է գեղեցկության նշանակությամբ): Թողնում ենք նաև այս անվան «արև» նշանակությունը պարսկերենում: Մեր վարդապետներից ոմանք հոռի-ն ստուգաբանում են «հոր» և «հորել», այսինքն՝ այդ ամսին, ըստ ին ու նոր ժամանակների սովորության, ցորենը և նմանները ժողովում են հորերի մեջ ու պահում:

Երրորդ ամիսն է սահմը կամ սահմին և սահենին . այս անունը նույնպես գալիս է Հայկի դստեր անունից: Դա հարմար է իզական սահուն անվանը և նմանվում է եբրայական Նոյեն-ին: Հույները ևս ունեն Սամիա անունով մի հավերժահարս, որը Մեանդր գետի դուստրն էր:

Չորրորդ ամիսն է տրեն . ասվում է, որ Հայկի որդիների դասից է: Շատ հավանական է՝ մատնանշում է Տիր չաստվածին, որը պիտի հիշատակվի իր նմանների կարգում:

Հինգերորդ ամիսը քաղոցն է, որ, ըստ Հայկի ազգաբանության, նրա որդիներից մեկի անվամբ է: Ոմանք ասում են, որ քաղ նշանակում է «արու այծ», ինչը հարմարում է իր ամսի տաքությանը (տարվա վերջերը): Ըստ այլոց՝ առավել պատշաճ է այգուց ու արտից քաղ անելուն:

Վեցերորդը արանց ամիսն է: Այն ոչ թե հարմարեցված է, այլ համարվում է Հայկի որդին:

Յոթերորդ ամիսը կրում է Մեհեկ, Մեհեկի կամ Մեհեկան դստեր անունը, որ անշուշտ, անհարմար չէ, բայց հիշեցնում է լուսնի մահիկը, նաև Մեհ կամ Մահ կոչված դիցական անձերին, ինչպես մեզանում առկա Մահևան, Մեհնդակ և այլ անունները:

Ութերորդ ամսանունն էր Արեգը, որ դուստրերից մեկի անունից էր: անունը հայտանշում է արեգակին, մանավանդ, ըստ վերոգրյալի, համարվում է, որ արեգակը իր նոր շրջանը սկսում է այդ ամսի մեջ՝ գարնանամուտին:

Իններորդ ամիսն ասկին կամ ասեկանը, որը ոչ որդիների կարգից էր համարվում և ոչ էլ դուստրերի: Ինչ նշանակելը և անսակարգի մեջ երբ մտնելը անհայտ են, որովհետև տոմարագիրները ասում են, թե այս անվան փոխարեն ամիսը նախկինում հարվանց էր կոչվում, և այդ նշանակում էր երկրագործական մի բան, ինչպես խոտ հարելը:

Տասներորդ ամսանունը՝ մարերի, դուստրերից մեկի անունից էր և հարմար իգականի, բայց հեռավոր ձևով հիշեցնում է նաև արիական մրրիկների ձայները:

Տասնմեկերորդ ամսանունն է մարգաց: Այս անվան համար տոմարագիրները վկայում են, ինչպես ասեկի համար . «Ի գործոց առին զանուանս»: Այսինքն՝ այդպես է անվանվում նույն անավա ընթացքում մարգերի ու դաշտերի ծաղիկներով և խոտերով զարդարվելու կամ դրանք հնձելու և երկրագործական այլ աշխատանքների պատճառով:

Տասներկուերորդը վերջին ամիսն է՝ կոչված հրոտից կամ հրորտից: Համարվում է Հայկի արու զավակների դասից: Ըստ ոմանց՝ այդ անունը հրի անունից է կազմվել այդ անավա տաքություն պատճառով: Պարթևների և պարսիկների մետ կան սրա նման հատուկ անձանց անուններ: Գուցե նույնն է Փրավորտը, քանզի հայերս նրանց ֆ տառը փոխում ենք հ-ի: Հույները (Դելփիքում) ունեին հերոիդ կոչված մի տոն: Բայց ինձ հայտնի չէ՝ դա զալիս է իրենց Հերով անվանված դյուցազնուհո՞ւց, թե՞ այլ աղբյուրից: Հնդիկներն էլ երբեմն իրենց Շիվա մեծ շաստվածին կոչում են Բուտրա: Գերմանացիները իրենց մի շաստվածի կոչում էին Hrodr, Hrudro, Hrede: Ֆրանսիացիների Ռոնեզ (Rodez) քաղաքն էլ նրանց Roth կամ Ruth դիքի անվամբ է կոչվել:

Հայոց ամիսները բոլոր 30-ական օրով էին, ինչպես այլոց մի մասի մոտ, և հարկ էր տարվա 365 օրերի մնացորդ հինգն էլ լրացնել մի հավելվածով, որ և կոչվում է Ավելյաց: Այս հինգ օրերը կոչվում էին վերոհիշյալ հինգ մուրրակների անուններով Լուծ, Եղջերու և այլն:

Ավելյաց օրերի անունները հարցնել են տալիս, թե արդյոք ամբողջ ամսվա օրերը իրենց հատուկ անունները չունեին, և մեկական պահապան ոգիներ չկային, ինչպես ունի զանդիկների կրոնը: Սա անհավանական չէ, և (թեպետ մեր ձեռքը

եկած մատյանների մեջ չենք գտել) ոմանք ասում են, թե գտել ու հրատարակել են Հարմար ու անհարմար սրանք են՝

1. արեգ,
2. հրանդ (իբրև հրախառն հող),
3. արամ,
4. մարգար (իբրև Sylvanus),
5. ահրանք (կիսայրյաց՝ ըստ Ջրպետի, և ահրնկեց),
6. մագդեղ կամ մագթեղ,
7. աստղիկ,
8. միհր,
9. ձոպաբեր (խոովաբեր),
10. մուրց (հաղթանակ),
11. երեզհան կամ երեզկան (անապատակեցություն՝ ըստ Ջրպետի)
12. անի,
13. պարխար,
14. վանատ (վանատուր)
15. արամագդ,
16. մանի (ծագումն)
17. ասակ (անսկիզբ)
18. մասիս,
19. անահիտ,
20. արագած,
21. գորգոր (գրգուր),
22. կորդի կամ կորդիք,
23. ծմակ,
24. լուսնակ,
25. ցրոն (կամ սփյուր),
26. նպատ,
27. վահագն,
28. սեի՞ն (լեռ),

29. վարագ,

30. գիշերավար:

Եթե այս անունները նույնիսկ չլինեին, անտարակույս է, որ օրերի մեջ խտրություն կար . մի մասը համարվում էր բարի, մի մասը՝ չարագուշակ: Մեզանում հիշատակվում են նաև օրվա կամ գիշերվա մի քանի պահեր կամ բաժիններ, բայց ոչ կրոնական անուններով, ինչպես զանդիկների մոտ: Դիցաբանական է թվում միայն արշալույսը կամ աշալուսքը: Չանդիկներն էլ սա (Ա պահ) անվանում էին ուշահինա կամ օշեն: Շատ հավանական է, որ գիշերը (քնության արժանի անուն) իր ահարկու մթությանը կրոնական երևակայություններ ու կերպարանքներ ծնած լինի մեր նախնիների մտքում, և թերևս դրանցից է հիմա էլ տեղ-տեղ լսվող գիշերամուտ կամ գիշերամութ անվանումը:

Ազգերից շատերը ցերեկը կամ տիվը բաժանում են երեք կամ չորս պահի, նույքանի և գիշերը կամ ցայգը: Սրանց որոշակի բաժանումը և անունները նշանակված չեն, մանավանդ, որ շատ նման կամ մոտ նշանակությամբ բառերը շփոթություն են առաջացնում: Որպես կարծիք հավանական ենք համարում՝ տվնջյան Ա պահը և նրա մասերը՝ արշալույս, այգ և լուսադեն, աղոթարան, Բ . առավոտ, արևի ծայրեր, Գ . միօրե կամ հասարակ օր, Դ . երեկո, արևմուտ:

Գիշերվա Ա պահ . խաղաղական, ցայգ, գիշերվա աղոտություն (աղօտք), Բ . գիշեր, հասարակ կամ խոր գիշեր, Գ . հավախոս:

Պահերը հայտնապես բնական ու գործածական են, և անկարելի չէ կարծել, թե գոնե մի մասին ժամանակին հարմարեցվել են դիցաբանական կամ աղթարական գրույց և առասպել: Իսկ պահերի յուրաքանչյուր մասերին, այսինքն օրվա 24 ժամերին, մեկական նվիրական ոգի կամ պահապան կարգելը հավանական չի թվում: Ըստ երևույթին, սուկ իմաստասերի կամ իմաստակի գրչով են հնարվել այդ անունները, որ հիշատակվել են նաև որոշ բառգրքերում պարզապես ժամերի բնական միջոցին պատշաճեցնելու ցանկությամբ (ոչ շատ հաշոյ) առանց կրոնական նշանակության: